ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցման
(ԾՋԲ-1/1)

ք. Երևան 31.01.2014թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» պետական կառավարչական հիմնարկը, որը գործում է իր կանոնադրության հիման վրա, ի դեմս Աշխատակազմի ղեկավար Ա. Ներսիսյանի (այսուհետ՝ Բաժանորդ), մի կողմից, և «Դ-Տելեկոմ» ՓԲԸ, ի դեմս Գլխավոր տնօրեն Ռ. Յիրիկյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Օպերատոր), մյուս կողմից (միասին՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան և գործողության ժամկետը

1.1 Օպերատորը, իր կողմից սահմանված ու Բաժանորդին՝ որպես հատուկ գործընկերոջ ներկայացված օֆերտայի՝ Շարժական էլէկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցման ընդհանուր պայմանների շրջանակներում (սակագնային պլանը նախատեսված է սույն պայմանագրի հավելված 1-ում), սույն պայմանագրով սահմանված կարգով, շարունակում է էլեկտրոնային հեռահաղորդակցության ծառայությունների (այսուհետ՝ Ծառայություն) անխափան և արդիական մատուցման գործընթացը՝ սույն պայմանագրի հավելված 2-ում նախատեսված հեռախոսահամարներով, իսկ Բաժանորդը պարտավորվում է ընդունել Ծառայությունները և վճարել դրա համար՝ Օպերատորի կողմից սահմանված սակագնային պլանին համապատասխան: Օպերատորը մատուցում է սույն պայմանագրով սահմանված Ծառայությունները համապատասխան իր կողմից սահմանված կանոնների:

1.2 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է այնքան ժամանակ, քանի դեռ որևէ Կողմ մյուսին գրավոր չի հայտնել այն դադարեցնելու մասին:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Օպերատորի պարտավորությունները.

2.1.1. առկա տեխնիկական հնարավորությունների սահմաններում, համաձայն Բաժանորդի կողմից ընտրված բաժանորդագրման պլանի պայմանների, ապահովել զանգեր կատարելու և ստանալու, ինչպես նաև շարժական կապի այլ Ծառայությունից օգտվելու հնարավորություն,

2.1.2. Բաժանորդին ապահովել մատուցվող Ծառայությունից անխոչընդոտ օգտվելու հնարավորություն և նրան հասու դարձնել սույն պայմանագրի շրջանակներում անհրաժեշտ տեղեկատվությունն ու կանոնակարգերը.

2.1.3. Բաժանորդի պահանջի դեպքում անհատույց տրամադրել վերծանումներ մատուցված Ծառայության մասին,

2.1.4. Ծառայությունների մատուցման վերաբերյալ հաջորդ տարվա սակագների փոփոխման անհրաժեշտության դեպքում Բաժանորդին այդ մասին գրավոր տեղեկացնել մինչև տվյալ տարվա նոյեմբերի 1-ը

2.1.5. իր գործառույթների պատասխանատվության շրջանակում, ողջամիտ ժամկետում վերացնել Ծառայության մատուցման խափանումը կամ ընդհատումը,

2.1.6. սպասարկման պլանների, Ծառայության ցանկի, դրանց մատուցման պայմանների և կանոնների փոփոխման դեպքում նախապես իրազեկել Բաժանորդին,

2.1.7. տեխնիկական անհրաժեշտությամբ պարտադրված Ծառայության ծավալների կարճաժամկետ սահմանափակում կիրառելու դեպքում հնարավորության դեպքում նախապես իրազեկել Բաժանորդին,

2.1.8. սեփական նախաձեռնությամբ սույն պայմանագրի լուծման դեպքում 1 (մեկ) ամիս առաջ տեղյակ պահել Բաժանորդին, իսկ եթե դրա համար հիմք հանդիսանա ընկերության լուծարման կամ սնանկացման գործընթացը, ապա այն սկսելուց առաջ նախապես տեղյակ պահել Բաժանորդին:

2.2. Օպերատորի իրավունքները.

2.2.1. սեփական հայեցողությամբ ժամանակ առ ժամանակ փոփոխել Շարժական էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցման ընդհանուր պայմանները՝ օֆերտայով սահմանված կարգով, որը պարտադիր կլինի Բաժանորդի համար,

2.2.2. Բաժանորդի հետ նախապես համաձայնեցնելով՝ կարճաժամկետ սահմանափակում կիրառել Ծառայության ծավալների նկատմամբ՝ ելնելով տեխնիկական անհրաժեշտությունից,

2.2.3. Բաժանորդի կողմից սույն պայմանագրի պայմանների խախտման դեպքում միակողմ կասեցնել Ծառայությունը (դրանց մասը) կամ դադարեցնել սույն պայմանագիրը՝ նախապես գրավոր կամ բանավոր ծանուցելով Բաժանորդին,
2.2.4. պահանջել Բաժանորդից ժամանակին կատարել մատուցված ծառայությունների համար դրամական միջոցների փոխանցումները, իսկ պարտք առաջանալու պարագայում այն գրոյացնել հաջորդ ամսում,
2.2.5. սույն պայմանագրի 3.1 կետով նախատեսված գումարի նվազեցման դեպքում, Օպերատորը, Բաժանորդի հետ համաձայնեցնելով, կարող է սահմանափակել հաշվետու ժամանակահատվածում (ամիս, եռամսյակ) մատուցվող Ծառայության քանակը՝ այնպես որ ամսական մատուցված կամ մատուցվելիք Ծառայության արժեքի հանրագումարը չգերազանցի այդ կապակցությամբ սահմանված գումարի չափը,
2.2.6 Սույն պայմանագրի 3.1. կետով նախատեսված գումարի նվազեցման դեպքում, անհրաժեշտությունից ելնելով, Օպերատորը կարող է սահմանափակել հաշվետու ժամանակահատվածի (ամիս) ընթացքում Բաժանորդի կողմից ստացվող Ծառայության քանակը՝ ըստ իր հայեցողության կամ յուրաքանչյուր համարի մասով հավասարապես, այնպես որ ամսական մատուցված/մատուցվելիք Ծառայության արժեքի հանրագումարը չգերազանցի վերոնշյալ կետով նախատեսվածը:
2.3. Բաժանորդի պարտավորությունները.
2.3.1. պահպանել Ծառայությունների վերաբերյալ Օպերատորի սահմանած կանոններն ու կանոնակարգերը,
2.3.2. սույն պայմանագրով մատուցված Ծառայության համար, Օպերատորի ներկայացրած (առաքած) հաշվեգրերի և հանձման-ընդունման արձանագրությունների հիման վրա, սահմանված սակագներով, հաշվարկված գումարը փոխանցել Օպերատորի հաշվարկային հաշվին,
2.3.3. SIM քարտերը պահպանել պատշաճ վիճակում և օգտագործել միայն Օպերատորի սահմանած կանոններին համապատասխան:
2.4. Բաժանորդի իրավունքները.
2.4.1. ցանկացած ժամանակ պահանջել Օպերատորից կասեցնելու կամ դադարեցնելու հավելված 2-ում նշված SIM քարտ(եր)ի ակտիվությունը, եթե խախտվել է Բաժանորդի սահմանած կանոնները, ինչպես նաև ակտիվացնել Ռոումինգ Ծառայությունը,
2.4.2. անհրաժեշտության դեպքում Օպերատորից պահանջել կատարելու վճարվելիք գումարների վերահաշվարկ՝ ամսական կամ եռամսյակային կտրվածքով և արդյունքները տրամադրել Բաժանորդին,
2.4.3. Օպերատորից ստանալու ճշգրիտ տեղեկատվություն՝ մատուցվող Ծառայության ծավալի, գանձվելիք գումարների, ընթացիկ մնացորդի և սակագների ենթադրվող փոփոխությունների մասին,
2.4.4. լուծել սույն պայմանագիրը՝ 30 օր առաջ ծանուցելով Օպերատորին և վճարելով արդեն իսկ օգտագործած Ծառայության համար:

3.Պայմանագրի գինը և վճարման կարգը

3.1. Սույն պայմանագրի հավելված 2-ով սահմանված բոլոր հեռախոսահամարների և այլ ծառայությունների գծով Բաժանորդի կողմից վճարվելիք տարեկան ընդհանուր գումարը 2014թ. համար կկազմի 2,932000 (երկու միլիոն ինը հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամը: Հետագա տարիների համար կողմերը կարող են առանձին՝ սույն պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող փաստաթղթի (համաձայնագրի) միջոցով սահմանել վճարման ենթակա գումարի առավելագույն սահմանաչափ, որը կտարբերվի սույն կետով նախատեսված գումարից: Եթե վերը նշված ժամկետի ավարտից հետո Բաժանորդը շարունակում է օգտվել Ծառայությունից, իսկ վերը նշված համապատասխան որեւէ փաստաթուղթ Կողմերի միջեւ չի կնքվում, ապա Կողմերը կհամարեն, որ վճարման ենթակա գումարի առավելագույն սահմանաչափ տվյալ տարվա համար չի սահմանվել:
3.2. Բաժանորդն իրեն մատուցված փաստացի Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ տասնօրյա ժամկետում դրամական միջոցները Օպերատորի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:
3.3. Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է երկկողմ ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա:
3.4. Սույն պայմանագրի 3.1 կետով նախատեսված գումարի նվազեցման դեպքում, Օպերատորը, Բաժանորդի հետ համաձայնեցնելով, կարող է սահմանափակել հաշվետու ժամանակահատվածում (ամիս, եռամսյակ) մատուցվող Ծառայության քանակը, այնպես, որ ամսական մատուցված կամ

մատուցվելիք Ծառայության արժեքի հանրագումարը չգերազանցի այդ կապակցությամբ սահմանված գումարի չափը (3.1կետ):
Սույն պայմանագրի 3.1. կետով նախատեսված կարգով վճարման ենթակա գումարի առավելագույն սահմանաչափ տվյալ հաշվետու տարվա համար սահմանված չլինելու դեպքում սույն կետի՝ առաջին նախադասությամբ սահմանված դրույթները չեն կիրառվի:

4.Կողմերի պատասխանատվությունը

4.1. Կողմերը պատասխանատվություն են կրում սույն պայմանագրով սահմանված իրենց պարտականությունների կատարման համար:
4.2. Օպերատորը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման որակի և սույն պայմանագրի հավելված 1-ով սահմանված սակագների պահպանման համար:
4.3. Սույն պայմանագրի 2.1. կետը խախտվելու և այդ կապակցությամբ Բաժանորդի բանավոր կամ գրավոր ահազանգերը անտեսելու դեպքում Օպերատորից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրով նախատեսված գումարի 0,5 %-ի չափով:
4.4 Սույն պայմանագրի 2.3. կետով սահմանված ժամկետները պարբերաբար խախտելու և դրանցով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում Բաժանորդից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրով նախատեսված գումարի 0,5 %-ի չափով:
4.5 Օպերատորը և Բաժանորդը ստանձնած պայմանագրային պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
4.6 Օպերատորը պատասխանատվություն չի կրում տեխնիկական խափանման հետևանքով ծառայությունների ընդհատման կամ այլ խանգարման համար բացառությամբ դեպքերի, երբ այն ողջամտորեն պետք է կանխատեսվեր և կանխվեր Օպերատորի կողմից: Այնուամենայնիվ, Օպերատորը պարտավոր է ձեռնարկել ողջամիտ միջոցներ կանոնավոր ծառայությունների շուտափույթ վերականգնման համար:
4.7 Սույն պայմանագրով Օպերատորի պատասխանատվությունը ցանկացած պարագայում որևէ մեկամսյա ժամանակահատվածում չի կարող գերազանցել SIM քարտի միջոցով տեղական զանգերի համար Բաժանորդի կողմից վճարվող միջին ամսական գումարը:
4.8 Բաժանորդը սույն պայմանագրով ֆինանսական պարտավորություններ ստանձնում է այդ գնումն իրականացնելու համար պահանջվող ֆինանսական հատկացումներ նախատեսված լինելու դեպքում և այդ հատկացումների շրջանակում, սույն պայմանագրի 3.1. եւ 3.4. կետով սահմանված կարգով:

5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

5.1. Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են՝ երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի միակողմ լուծել սույն պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

6. Այլ պայմաններ

6.1 Սույն պայմանագիրը լուծվելու դեպքում, մատուցված Ծառայության դիմաց ֆինանսական գործառույթները ավարտելու նպատակով, Կողմերի միջև կատարվում է փոխադարձ վերջնահաշվարկ:
6.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կամ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհամարվի սույն պայմանագրի անբաժանելի մասը:

6.3 Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել Կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքի, ընդ որում, նախքան ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսակնա հատկացումների նվազեցումը:

6.4. Սույն պայմանագրի կապակցությամբ Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության ձեռք չբերելու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դատական կարգով.

6.5. Սույն պայմանագիրը կազմված է 8 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

7. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը.

«ԲԱԺԱՆՈՐԴ»
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» պետական կառավարչական հիմնարկ
Հասցե՝ ք. Երևան, Բաղրամյան 19
ՀԿՀՀ 0061508
ԿԳ գործառնական վարչություն ՓԲԸ
հ/հ 900011545069
Աշխատակազմի ղեկավար՝
Ա. Ներսիսյան

ստորագրություն
Կ.Տ.

«ՕՊԵՐԱՏՈՐ»
«Գ-Տելեկոմ» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Արգիշտի 4/1
ՀԿՀՀ 01551651
«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ
Հ/Հ 24701-1333330
Գլխավոր տնօրեն՝
Ռ. Յիրիկյան

ստորագրություն

Հավելված 1
Էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցման թիվ ԾՀԲ-1/1 պայմանագրի

ք. Երևան

31.01.2014թ.

Սակագնային պլանի անվանումը՝ «Մեր Գործընկեր»

Սակագնային պլանի համար կիրառվող սակագները (ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ)՝

Միացման վճար	0 դրամ
Ամսավճար	500 դրամ
Երաշխիքային կանխավճար	0 դրամ
Տեղական զանգեր	դրամ/րոպե
Խմբի ներսում	0
Դեպի ՎիվաՍել-ՍՏՍ ցանց	15
Դեպի ՀՀ այլ բջջային ցանցեր	25
Դեպի 374 97 բջջային ցանց	25
Դեպի 374 47 բաղաքային ցանց	25
SMS	դրամ/հատ
Դեպի ՎիվաՍել-ՍՏՍ-ի ցանց	5
Այլ ուղղություններով	20
MMS	դրամ/հատ
Տեղական	20
Դեպի էլ. փոստի հասցե	20
Միջազգային	20
Ինտերնետ*	դրամ/ՄԲ
Բոլոր կայքերը	20

"Մեր Գործընկեր" սակագնային պլանի բաժանորդները կարող են բաժանորդագրվել նաև ներառված խոսելաժամանակի փաթեթին և նոր առաջարկվող պայմաններին: Այն իրենից ներկայացնում է ինտերնետի հնարավորություն ըստ ուղղությունների:

«ԲԱԺԱՆՈՐԴ»
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» պետական կառավարչական հիմնարկ
Հասցե՝ ք. Երևան, Բաղրամյան 19
ՀՎՀՀ 0061508
ԿԳ գործառնական վարչություն ՓԲԸ
հ/հ 900011545068
Աշխատակազմի ղեկավար՝
Ա. Ներսիսյան

ստորագրություն
Կ.Տ.

«ՕՊԵՐԱՏՈՐ»
«Ղ-Տելեկոմ» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Արգիշտի 4/1
ՀՎՀՀ 01551651
«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ
հ/հ 24701-1333330
Գլխավոր տնօրեն՝
Ռ. Ցիրիկյան

ստորագրություն
Կ.Տ.

ՀԱՎԵԼՎԱԾ 2
էլեկտրոնային հեռահաղորդակցությունների
մատուցման ԾՁԲ-11/1 պայմանագրի

N	ՑՈՒՑԱԿ ՀՀ ՎՊ պաշտոնական հեռախոսահամարքի
	077
1	44-55-11
2	22-12-21
3	22-11-77
4	22-33-77
	094
5	075-075
6	---//--//--77-66-11
7	66-00-11
8	11-77-66
9	035-035
10	085-085
11	650-650
12	11-55-44

«ԲԱԺԱՆՈՐԴ»
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» պետական կառավարչական հիմնարկ
Հասցե՝ ք. Երևան, Բաղրամյան 19
ՀՎՀՀ 0061508
ԿԳ գործառնական վարչություն ՓԲԸ
հ/հ 90001154160659
Աշխատակազմի ղեկավար՝
Ա. Ներսիսյան

ստորագրություն
Կ.Տ.

«ՕՊԵՐԱՏՈՐ»
«Դ-Տելեկոմ» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Արգիշտի 4/1
ՀՎՀՀ 01551651
«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ
Հ/Հ 24701-1333330
Գլխավոր տնօրեն՝
Ռ. Յիրիկյան

ստորագրություն
Կ.Տ.